ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԳՊՀ գիտական խորհրդի 2023թ.
օգոստոսի 23-ի թիվ 1 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

«23» օգոստոսի 2023թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2023-2024 ուստարվա ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմեր

հ/հ	*Աշխատանքի բնույթը*	*Ժամանակի նորմեր*	*Ծանոթություն*
1.	Դասախոսություններ բակալավրիատում և մագիստրատուրայում	2 ակադեմիական ժամ պարապելու համար՝ 1 դասաժամ	1 ակադեմիական ժամը հավասար է 35 րոպեի, 1 դասաժամը հավասար է 2 ակադեմիական ժամի՝ 70 րոպեի:
2.	Սեմինար պարապմունքներ բակալավրիատում և մագիստրատուրայում	2 ակադեմիական ժամ պարապելու համար՝ 1 դասաժամ	
3.	Գործնական պարապմունքներ բակալավրիատում և մագիստրատուրայում	2 ակադեմիական ժամ պարապելու համար՝ 1 դասաժամ	
4.	Լաբորատոր պարապմունքներ բակալավրիատում և մագիստրատուրայում	2 ակադեմիական ժամ պարապելու համար՝ 1 դասաժամ	
5.	Ստուգարքների ընդունում	1 ակադեմիական ժամ՝ 4 ուսանողին	միջանկյալ ստուգարքներ չեն նախատեսվում
6.	Միջանկյալ քննությունների ընդունում	1 ակադեմիական ժամ՝ 4 ուսանողին	
7.	Քննությունների ընդունում	1 ակադեմիական ժամ՝ 3 ուսանողին	
8.	Անհատական աշխատանքների ընդունում	1 ակադեմիական ժամ՝ 4 ուսանողին	
9.	Կուրսային աշխատանքների ղեկավարում բակալավրիատում	3 ակադեմիական ժամ՝ մեկ կուրսային աշխատանքի համար	
10.	Բակալավրիատի ավարտական աշխատանքների ղեկավարում և գրախոսում	1 աշխատանքի ղեկավարման համար՝ 20 ակադեմիական ժամ, գրախոսման համար՝ 3 ակադեմիական ժամ	
11.	Համակարգչային ճարտարագիտության բաժնի ավարտական աշխատանքների բնապահպանության, կենսագործունեության	1 աշխատանքի մեկ բաժնի ղեկավարման համար՝ 2-ական ակադեմիական ժամ	

	անվտանգության և տեխնիկատնտեսական բաժինների ղեկավարում		
12.	Մագիստրոսական թեզի ղեկավարում և գրախոսում	1 մագիստրոսի համար՝ 26 ակադեմիական ժամ, որից 10 ակադեմիական ժամը կարող է կատարվել 3-րդ կիսամյակում, 16 ակադեմիական ժամը՝ 4-րդ կիսամյակում, գրախոսման համար՝ 4 ակադեմիական ժամ	
13.	Բակալավրիատի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանություն	հանձնաժողովի նախագահին՝ 1 ակադեմիական ժամ՝ 2 ուսանողին, յուրաքանչյուր անդամին՝ 1 ակադեմիական ժամ՝ 3 ուսանողին, արձանագրող քարտուղարին՝ 1 ակադեմիական ժամ՝4 ուսանողին	
14.	Ուսումնական, մանկավարժական, արտադրական, նախաավարտական, գիտամանկավարժական, գիտահետազոտական պրակտիկաների ղեկավարում, օրագրերի, բնութագրերի և հաշվետվությունների ստուգում և ընդունում, ստուգարքների ընդունում	շաբաթական 2 ակադեմիական ժամ	

15. Գավառի պետական համալսարանում դասախոսներն աշխատում են դրույքով և ժամավճարային հիմունքներով:

ԳՊՀ դասախոսների դրույքը ձևավորվում է միայն առկա ուսուցման ֆակուլտետների ուսումնական բեռնվածքներից, իսկ հեռակա ուսուցման ֆակուլտետում դասախոսներն աշխատում են ժամավճարային հիմունքներով:

16. Յուրաքանչյուր դասախոսի համար դասավանդման ծավալը որոշվում է համապատասխան ամբիոնի կողմից՝ պայմանավորված դասախոսի մասնագիտական որակավորումից, ամբիոնի մասնագիտացումից, և մեկ ուսումնական տարվա ընթացքում սահմանվում է 700-1080 ժամ:

17. Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության ծավալը ձևավորվում է՝ ըստ ուսումնական պլանների, ելնելով հետևյալ չափանիշներից՝ գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսի մեկ դրույքը բաղկացած է նվազագույնը 700 ակադեմիական ժամից, իսկ գիտական կոչում և աստիճան չունեցող դասախոսի 1 դրույքը՝ 720 ակադեմիական ժամից:

18. Մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը ամբիոնի վարիչի կամ նրա պարտականությունները կատարողի կողմից ամբիոնային ծանրաբեռնվածությունը բաշխվում է դասախոսների միջև՝ համաձայնեցնելով նրանց հետ, ներկայացվում ֆակուլտետի դեկանին, ապա ակադեմիական քաղաքականության բաժին՝ ստուգման, և հաստատվում ուսումնագիտական գծով պրոռեկտորի կողմից, ընդ որում՝

ա) մեկ ամբողջական դրույքով աշխատող գիտության դոկտորի, պրոֆեսորի ծանրաբեռնվածության մեջ դասախոսությունները պետք է կազմեն ոչ պակաս, քան 240 ակադեմիական ժամ,

բ) մեկ ամբողջական դրույքով աշխատող գիտության թեկնածուի, դոցենտի ծանրաբեռնվածության մեջ լսարանային /դասախոսություն, գործնական, լաբորատոր, սեմինար/ ժամերը պետք է կազմեն ոչ պակաս, քան 280 ակադեմիական ժամ, որից առնվազը 140 ակադեմիական ժամը պետք է կազմի դասախոսությունները:

19. Եթե ուսումնական տարվա համար դասախոսի ուսումնական ծանրաբեռնվածության մեջ առկա են դրույքից ավել ժամեր, ապա նրա բեռնվածությունը որոշվում է՝ հիմք ընդունելով սույն հաշվարկի նորմերի 19-րդ և 20-րդ կետերը: Համալսարանում դասախոսի դրույքը կարող է կազմել 0.25-ից մինչև 1.5 դրույք, իսկ ներքին համատեղությամբ աշխատող դասախոսների վարչական և դասախոսական դրույքների հանրագումարը չի կարող գերազանցել 2 դրույքը՝ ըստ անհրաժեշտության ներառելով նաև ժամավճարի հիմունքներով վարձատրվող դասաժամեր:

20. Ժամավճար սահմանվում է այն դասախոսների համար, որոնց տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության մեջ ընդհանուր ժամերի քանակը ավելի քիչ է, քան 0.25 դրույքին համապատասխան ժամերը, ինչպես նաև հրավիրյալ դասախոսների համար՝ հաշվի չառնելով հեռակա ուսուցման ֆակուլտետի ծանրաբեռնվածության մեջ ընդգրկված ժամերի քանակը: Դասախոսի դիմումի համաձայն՝ ռեկտորի հետ համաձայնեցնելու դեպքում հիմնական կամ հրավիրյալ դասախոսը կարող է աշխատել ոչ թե դրույքով, այլ ժամավճարով, կամ դրույք-ժամավճար հաշվարկման եղանակով:

Առկա ուսուցման ֆակուլտետների ծանրաբեռնվածությամբ որոշված աշխատավարձի վճարման սկզբունքը ամրագրվում է աշխատանքային պայմանագրում:

21. Եթե ուսումնական ծանրաբեռնվածության ծավալն ավելին է, քան դրույքի համար նախատեսված ժամերի քանակը, ապա մնացած մասը վճարվում է որպես ժամավճար՝ սեպտեմբեր-հուլիս ամիսների ընթացքում՝ հետևյալ ձևով. դրույքից ավել ժամերը բաժանվում են 11-ի (սեպտեմբերից հուլիս ամիսների քանակին), ապա կլորացվում դեպի փոքր ամբողջական մաս և վճարվում են սեպտեմբեր-հունիս ամիսների դրույքի հետ միասին, իսկ դրույքից ավել ժամերի մնացորդային մասը վճարվում է հուլիս ամսվա ընթացքում: Ի տարբերություն նախորդ տաս ամիսների (սեպտեմբերից հունիսը՝ ներառյալ) հուլիս ամսվա ընթացքում վճարվում են միայն մնացորդային ժամերը՝ առանց դրույքի հաշվառման, քանի որ հուլիսին համալսարանում ուսումնական գործընթաց չի իրականացվում:

22. Դասախոսները վճարվում են կատարած աշխատանքի ծավալին և հաստատված հաստիքացուցակին համապատասխան՝ հաշվի առնելով դասախոսությանը և գործնական աշխատանքին հավասարեցված ժամերը:

23. Դասախոսությանը հավասարեցված ժամերն այն ժամերն են, որոնք վարձատրվում են դասախոսության 1 ակադեմիական ժամի համար նախատեսված գումարով. դրանք են՝ դասախոսության, միջանկյալ քննության, անհատական աշխատանքի, ամփոփիչ քննության, բակալավրիատի ավարտական աշխատանքի ղեկավարման, մագիստրոսական թեզի ղեկավարման համար նախատեսված ժամերը, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի և անդամների աշխատանքի ժամերը և հիմնական դրույքից ավել ժամերը: Եթե դասախոսն ունի միայն գործնական ժամեր, ապա դրույքից ավել ժամերը չեն հավասարեցվում դասախոսության ժամերին:

24. Գործնական աշխատանքին հավասարեցված ժամերն այն ժամերն են, որոնք վարձատրվում են գործնական աշխատանքի 1 ակադեմիական ժամի համար նախատեսված գումարով, դրանք են՝ գործնական աշխատանքի, սեմինարի, լաբորատոր աշխատանքի, կուրսային աշխատանքի, ստուգարքի, ուսումնական, մանկավարժական, արտադրական (նախաավարտական), գիտահետազոտական, գիտամանկավարժական պրակտիկաների ղեկավարների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի արձանագրող քարտուղարի աշխատանքի ժամերը, ինչպես նաև հիմնական դրույքից ավել ժամերը, եթե դասախոսն ունի միայն գործնական ժամեր:

25. Վերոնշյալ նորմերից տարբերվող ուսումնական ծանրաբեռնվածությունները թույլատրվում են միայն անհրաժեշտության դեպքում՝ ռեկտորի համաձայնությամբ: